ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 194-Ա/2 «22» հունվարի 2025 թ.

2025 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «2025 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների համար 2025 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման համար առաջարկել՝

1) «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի տնօրեն Ալ.Մանուչարյանին՝ ձևավորել հանձնաժողով և անցկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման ձևով պատիժ կրող

դատապարտյալների համար 2025 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2) «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Պետրոսյանին՝ ձևավորել հանձնաժողով և անցկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների համար 2025 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ՝ համաձայն հավելված 2-ի:

3) «Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ.Ղումաշյանին՝ ձևավորել հանձնաժողով և անցկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների համար 2025 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

3. «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին առաջարկել 2025 թվականի 1-ին քննաշրջանի համար դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ անցկացնել «Երևանի թիվ 198 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

4. Քննություններն անցկացնել 2025 թվականի փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը ներառյալ:

5. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության հանրակրթության վարչության պետին:

6.Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

1/22/2025

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N1

Կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարի

2025թ.22 հունիսի N 194-Ա/Հ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

2025 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ)

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2025 թվականի 1-ին քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), «Օտար լեզու» («Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Գրականություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայից հանձնում են ստուգարք (նորմատիվների հանձնում): Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2025 թվականի 1-ին քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» , Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Ռուսաց լեզու» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է ԳԹԿ-ն՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայից հանձնում են ստուգարք (նորմատիվների հանձնում): Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն ժամանակացույցի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի ՝

8-9 միավոր– 4	16-17 միավոր–8
10-11 միավոր– 5	18-19 միավոր-9
12-13 միավոր– 6	20 միավոր-10
14-15 միավոր – 7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

Հավելված N2

ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2025թ.22 հունվարի N 194-Ա/2. հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2025 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ)

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

	Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	նորմատիվների հանձնում	17.02.2025թ.
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	18.02.2025թ.
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	20.02.2025թ.
4.	Հասարակագիտություն	բանավոր	21.02.2025թ.
5.	Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	24.02.2025թ.
6.	Ինֆորմատիկա	բանավոր	25.02.2025թ.
7.	Կենսաբանություն	գրավոր	27.02.2025թ.
8.	Համաշխարհային պատմություն	գրավոր	28.02.2025թ.
9.	Ֆիզիկա	գրավոր	03.03.2025թ.
10.	Քիմիա	գրավոր	05.03.2025թ.
11.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	բանավոր	07.03.2025թ.
12.	Աշխարհագրություն	գրավոր	10.03.2025թ.
13.	Ռուսաց լեզու	բանավոր	12.03.2025թ
14.	« Ռուս գրականություն » (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	13.03.2025թ.
15.	«Գրականություն»	բանավոր	14.03.2025թ

*Քննությունների սկիզբը ժամը՝ 14:00-ին:

1. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

	Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	նորմատիվների հանձնում	17.02.2025թ.
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	18.02.2025թ.
3.	ՆԶՊ և անվտանգ	բանավոր	20.02.2025թ.

	կենսագործունեություն		
4.	Հասարակագիտություն	բանավոր	21.02.2025թ.
5.	Ինֆորմատիկա	բանավոր	25.02.2025թ.
6.	Կենսաբանություն	գրավոր	27.02.2025թ.
7.	Համաշխարհային պատմություն	գրավոր	28.02.2025թ.
8.	Ֆիզիկա	գրավոր	03.03.2025թ.
9.	Քիմիա	գրավոր	05.03.2025թ.
10.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	գրավոր	07.03.2025թ.
11.	Աշխարհագրություն	գրավոր	10.03.2025թ.
12.	Ռուսաց լեզու	գրավոր	12.03.2025թ
13.	«Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	13.03.2025թ.

*Քննությունների սկիզբը ժամը՝ 12:00-ին: